ՆՈՐ-ԴԱՐ

№ 154 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 13 Սեպտեմբերի

1885

Ուրբաթ 13 Սեպտեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 154

Տարեկան 10 բուբլի. վեց ամիսը՝ 6 բուբլի. երեք ամիսը՝ 3 բ. 50 կ. Հասող 5 կոպեկ։
Յաճախորդ դիմում են Թիֆլիսում՝ վերին խմբագրատունը։

Խմբագրութիւնը Հասցէն՝ Типогр. Редакція „Норъ-Даръ“ կամ՝ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամ։
Յայտարարութիւնների բաւին 2 կ., ընկալեալների համար՝ կրկնապատիկ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դար»-ին բաժանորդ են դրվում սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը և վճարում են—4 բ. 50 կ.

Հասցեների փոխոխութեան համար վճարում են երեք երեք կոպեկանոց մարկա։

Յայտարարութիւնները ընդունվում են մի մի աչն խմբագրատունը, քաղաքի կենդրոնում, պօստատան եւ-ը, Տրոյիցկի փողոցում Սաֆրա եֆէնդու հանդէպ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ամսիս 10-ին գիշերուայ ժամը 9-ին Թիֆլիսում սեղաց աստիկ անձրև, որը սարսափելի հեղեղ առաջացրեց։ Այդ ժամանակ վրացիներից շատերը գետի էլեն նմանվում և մէկ կողմից միւսը անցնելը անկարելի էր։ Քաղաքիս մի քանի տեղերում քանդուեցան մի քանի հին շինութիւններ և շատ տներ ջրով լցուեցան։ Կուկիա կոչուած Թաղում հեղեղը մի երեխային տարել է։

—

Կիեվի համալսարանի բժշկական բաժնում մտնող ուսանողների թիւը չափազանց մեծանալու պատճառով, նոյն համալսարանի վարչութիւնը այդ հարցի առթիւ բացատրութիւնների համար դիմեց Կիեվի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, որը կարեւի գտաւ կարգադրել, որ այսուհետև Կիեվի համալսարանի բժշկական բաժնում, տեղի սակաւութեան պատճառով կարող են մանել միայն այն ուսանողները, որոնք կատարեն Կիեվի ուսումնարանական շրջանի գիմնազիաներում. իսկ ուրիշ գիմնազիաններում աւարտողները, նոյն իսկ ոսկէ մէդալներով, չեն ընդունուի Կիեվի համալսարանի բժշկական բաժնում.

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ։—Ահա ուրախ է, որ այստեղ եկել է մի լուսանկար՝ Ց. սարկաւագ Տէր-Դանիէլեանը, Դանձակից, որը լուսանկարում է մեր գաւառում գտնուող հնութիւնները։ Տէր Դանիէլեանը Սիւնեաց պաշտօնական վիւսական ունի և նրա հոլլուտութեամբ է եկած մեր գաւառը։ Յանկալի էր, որ հասարակութիւնը աջակցէր և լուսանկարէն յարգելի լուսանկարին, որ սա կարողանար, որքան կարելի է յաջողութեամբ կատարել իր բարենպատակ ձեռնարկութիւնը։

—

«Рижскій Вѣстникъ» լրագրի ասելով Բալթեան նահանգների գերմանական ուսումնարաններում ռուսաց լեզուի մէջ առաջադիմութիւն անելու նպատակով, լուսաւորութեան մինիստրութիւնը առանձին նոր կարգադրութիւններ է արել, որոնցով ռուսաց լեզուի աւանդելու պայմանները գերմանական ուսումնարաններում փոփոխութիւնների են ենթարկվում։

—

„Օլեվիկ“ լրագիրը հաղորդում է, որ մամուլին վերաբերեալ գլխաւոր կառավարութեան կարգադրութեամբ Ռէվելում գերմանական լեզուով հրատարակուող «Nordische Rundschau» ամսագիրը դադարեցրած է։

—

ՖԻԻՐԴԱՄԻՐԻՑ։—Սեպտ. 9-ին գիշերը ժամի 10-ը 55 րոպէ անց Թիֆլիսի կայարանից Ճանապարհ ընկանք և միւս օրը առաւօտը 8 ժամ 38 րոպէ անց հասանք Ուգջարի կայարանը։ Կայարանի կառավարիչը չը Թողեց, որ գնացքը շարունակուի, որովհետև Ղարսում և Բեյազարի կայարանների մէջ տեղ անձրևից 10 վերստ Ճանապարհ վիչացել է։ Ոտով կամ ձիով պէտք է անցնէին 10 վերստ Ճանապարհը։

—

ՊՕԼՍԻՑ մեզ գրում են.—Որբաթ օրը օգոստոսի 30-ին Ազգ. ժողովը նըստի էր հրաւիրուած. դժբաղդաբար նախորդ երեկոյին Սայլ պատրիարքի մահը Ճանուցանող հեռագիրը եկած էր Երուսաղէմէն, ուստի ժողովը պարտաւորեցաւ ի նշան սգոյ 15 օր յետաձգել նիստը։ Ա՛ռ քեզ նոր խնդիր մ՚ևս դեռ ուրիշները չը լուծուած։

—

ՐԱՍՏՈՎԻՑ „Ալէքսանեանի լրագրական գործակալութիւնը հպորդում է «Кавказъ» լրագրին, որ Ռուսիայի հարաւային նահանգներից մեծ բազմութեամբ գիւղացիները գաղթում են դէպի հիւսիսային Կովկասը—Սաւրոպոլի նահանգում և Կուբանեան շրջանում բնակուելու։

Նոր Ճանասէն Թուրկանների սկզբնէրին նոյնպէս շատ գիւղացիներ Տաւրիկեան և Խէրսոնեան նահանգներից, որոնք տնտեսապէս լաւ ապահով գրութեան մէջն էին, գաղթեցին դէպի Կուբանեան շրջանը և բնակուեցան Տէմրուկեան և Նիժատէրինոդարեան գաւառներում, բայց մէկ տարուս չափ հազիւ էր անցել, երբ գաղթականները ստիպուած էին այս և այն կողմերը գրուելու և սաստիկ տենդից բռնուելով, նրանցից շատերը մեռան, իսկ մնացածները իրանց ունեցած կարողութիւն վատնելով, լացով և կսկիծով ստիպուեցան վերադառնալ իրանց նախկին հայրենիքը։ Արդ՚եօք այժմեան գաղթականներին նոյն վիճակը չ՚սպասում։

—

Ինկատի առնելով, որ վերջին ժամանակները Կովկաս գաղթողների թիւը չափազանց շատացաւ, առաւելապէս Բալթեան նահանգներից, որով Կովկասի վարչութիւնները շատ դժուարութիւնների են ենթարկվում, այդ պատճառով ինչպէս հաղորդում է «Рижскій Вѣстникъ» լրագիրը, Լիֆլանդիայի նահանգապետը մի շրջաբերական հրատարակից, որով արգելվում է գաղթականութիւնը, առանց առանձին թոյլատուութիւն ստանալու։

—

ՊՕԼՍԻՑ ստացած մի բնդարձակ և հետաքրքիր նամակից քաղում ենք հետևեալ կտորները. „Հմայակ Սրբազան Դիմաքսեանը հրատարակաւ առաջարկում է և պաշտպանում է „եկեղեցական համագումար ժողովոյն գումարման պէտքը“։ Ուշադրութեան արժանի են՝ եկեղեցականաց անկեալ վիճակի բարւոքումը, ազգին. արժանաւոր եկեղեցականներ պատրաստելու խնդիրը, քահանայից նիւթական վիճակի բարւոքումը և այլ առիթ խոչոր խընդիրներ. Հմայակ Սրբազանը եկեղ. համագումար ժողովի գումարման պէտքը այժմ ամեն ժամանակից աւելի անհրաժեշտ է համարում, որովհետև նրա ասելութեամբ նոյն իսկ „եպիսկոպոսաց գաղափարներն և կարծիքներն ալ մէկմէկիէ տարբեր ըլլալ կը նշմարուին“։ Այժմեան գործող կրօնական ժողովի վերայ խօսելով Հմայակ Սրբազանը հետևեալ ծանր նկատողութիւնն է անում. «ներկայ Կրօնական ժողովոյ անդամոց մեծագոյն մասին արժանաւորութիւնը կը ճանաչենք և սրտի մըտօք կը յարգենք, սակայն անդուլ ներոյ կ՚ըլլան մեզ, եթէ ըսենք, որ իրենց ծանուցեալ և վկայեալ համարման, արժանի չը տեսնուեր գործոց ընթացքը»։

Այսուհետև Թերթերը զանազան գոյնի են. մէկ գոյնի են Արևելք, Փունջ և Մարսէլիոզ նոր հրատարակուող չաբախախեանի Արմենեան։ Ի՞նչացու է սա, դուք գտնեցէք. այս վերջինի խմբագրին հմ պէտք է Ձեզ մօտ ճանաչում լինին. դուք նրանից ի հարկէ ձեռք վերցրած կը լինէք, բայց նա ձեզ չատ սիրում է, ձեղանից ձեռք վերցնելու միտք չունի—նա ասր վաճառի է, էջմիածին գալու պատրաստութիւն էր տեսել խեզձը, այժմս Մարսէյլ է ընկել և ջիգրու սկսի սպիտակ է ասում, սպիտակին սև, իսկ ոսկին օրտեզ էլ որ գտնի, միշտ—դեղին է նրա աչքում։

Ձեր քօռ բաղտին նայեցէք, որ վանեցին էլ յանդգնութիւն ունի խօսելու Մարսէյլից։ Այստեղի Թերթերը Աբևհիքին Աշխատան են անուանում, ուրիշ անուններ էլ են տալիս։ Այս Թերթի հաղորդած լուրերին չը պէտք է հաւատալ, հազար լեզու ունի սա և ամեն բան յարմարեցնում է իւր մասնաւոր շահերին. ուշիմ ընթերցողը ինքը կը նկատէ այդ ամեն բան, և ի-Թէ սկզբունքի տէր է, պատուոյ զգացմունք ունի, գիտենք արդէն Թէ ինչ դատաւճիռ կը դնէ։

Ազգ. ժողովը դեռ չէ գումարուել. 15 օրով յետաձգուեցաւ, Խառն ժողովը խիստ քննադատութեան է ենթարկվում, որ համարձակվում է իւր օրինական սահմանից դուրս գալ, Ազգ. ժողովի իրաւունքները բանեցնել։ Բոլոր նշաններից երևում է, որ գաւառական ժողովները, եկեղեց. ժողով, Ազգ. կեդրոնական ժողովը, Խառն ժողով միմեանց հետ՝ կռուի պէտք է մանեն Սահմանադրութեան համար, որ ի վերայ հիմնուած են այդ ամեն ժողովները։

—

Ամսիս 10-ին գիշերը պատահած սաստիկ հեղեղից փշացել է Բագու Թիֆլիսեան երկաթուղու գիծը. Ագջն-Քարուլ կայարանի մօտակայքում, և համարեայ մի ամբողջ օր գնացքի երթևեկութիւնը խափանուած է եղել։

—

Ամեն. Ս. Պատրիարք հայրն անմիջապէս չորքերական մուղից մայրաքաղաքիս Քարուշայ, Աւագերիցաց և Աթոռակալաց, ինչպէս նաև ի գաւառս Առաջնորդաց և Առաջնորդական տեղապահաց, որպէս զի յետ այսորիկ Ս. Պատարագի մէջ հանգուցեալ յիշատակեն հոգելոյս Հայրապետն, ըընտրութիւն նոր Պատրիարքին, և միանգամայն զարգարում է պատի վերայ կախած իմ մեծ մօր պատկերը։ Գեղագրական հմտութեամբ գրած պատկի վկայաթուղթի օրինակը դեռ լինի մօտ է գտնվում և ես շատ արժան գնով կը ծախէի“։

„Խոբերան այլ ևս չերևեցաւ“։

„Դժբաղդաբար ոչ. ևս սիրով կը կամենայի հաւատալ, որ նա իմ տան Թիւը մոռացաւ, բայց դեռ չը լսեցի որ նրա նման մի մարդ մեր Թաղումը լինի հարցրած լինէր։ Մի ուրիշ պէպք, որ նորերումս տեղի ունեցաւ, վեր Թարմ մնում է յիշողութեանս մէջ։ Մի գոյզ պատկի կարգը կատարելուց յետոյ վեհան ցանկութիւն յայտնեց ունենալու պատկի կատարման վկայութեան մի օրինակ ճաշակով չինած չրջանակի մէջ։ «Մի շատ գեղեցիկը լինի համար չինել տուէք“, ասաց նա, „ես պատրաստ եմ դրա համար 25 գօլլար վճարելու։ Ե՞րբ կարող եմ ստանալ“։

«Ես նրան պատասխանեցի, որ ես մինչև շաբաթուայ վերջը պատրաստել կը տամ և կը հասցնեմ իրան։ Այդ Թուղթը և չրջանակը լինի 17 գօլլար նստեց, բայց այն էլ պէտք է ասեմ, որ դա մի փառաւոր բան էր։ Ինքնիշխ կարող էք տեսնել, աւելացրեց պատասխանը Հառաչելով։ Այդ չրջանակը այժմ էլ զարդարում է մեր ննջասենեակի պատը, ուր ամեն առաւօտ ես նայում եմ նրան և միշտ ինձ ասում եմ, որ ես ինչ ուզում էի տալ, ես ամենևին չեմ ստացել։ Ես ինձ ասում եմ, որ ես ինչ ուզում էի տալ, ես ամենևին չեմ ստացել։

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն.—Լուրեր։ Սայլ Պատրիարք Երուսաղէմայ։ Ճանապարհորդական նկատողութիւններ։

Թղթակցութիւններ.—Նիժնի-Նովգորոդ Տօնավաճառից։

Քաղաքական.—Սոլսեցիս։

Հեռագրեր։

Յայտարարութիւններ։

Ֆէյլէտօն.—Նիւ-Յորքի մի պատուոր պաշտօնավարութեան գաղտնիքներից։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ամսիս 10-ին գիշերուայ ժամը 9-ին Թիֆլիսում սեղաց աստիկ անձրև, որը սարսափելի հեղեղ առաջացրեց։ Այդ ժամանակ վրացիներից շատերը գետի էին նմանվում և մէկ կողմից միւսը անցնելը անկարելի էր։ Քաղաքիս մի քանի տեղերում քանդուեցան մի քանի հին շինութիւններ և շատ տներ ջրով լցուեցան։ Կուկիա կոչուած Թաղում հեղեղը մի երեխային տարել է։

—

Կիեվի համալսարանի բժշկական բաժնում մտնող ուսանողների թիւը չափազանց մեծանալու պատճառով, նոյն համալսարանի վարչութիւնը այդ հարցի առթիւ բացատրութիւնների համար դիմեց Կիեվի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, որը կարեւի գտաւ կարգադրել, որ այսուհետև Կիեվի համալսարանի բժշկական բաժնում, տեղի սակաւութեան պատճառով կարող են մանել միայն այն ուսանողները, որոնք կատարեն Կիեվի ուսումնարանական շրջանի գիմնազիաններում. իսկ ուրիշ գիմնազիաններում աւարտողները, նոյն իսկ ոսկէ մէդալներով, չեն ընդունուի Կիեվի համալսարանի բժշկական բաժնում.

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ։—Ահա ուրախ է, որ այստեղ եկել է մի լուսանկար՝ Ց. սարկաւագ Տէր-Դանիէլեանը, Դանձակից, որը լուսանկարում է մեր գաւառում գտնուող հնութիւնները։ Տէր Դանիէլեանը Սիւնեաց պաշտօնական վիւսական ունի և նրա հոլլուտութեամբ է եկած մեր գաւառը։ Յանկալի էր, որ հասարակութիւնը աջակցէր և լուսանկարէն յարգելի լուսանկարին, որ սա կարողանար, որքան կարելի է յաջողութեամբ կատարել իր բարենպատակ ձեռնարկութիւնը։

—

«Рижскій Вѣстникъ» լրագրի ասելով Բալթեան նահանգների գերմանական ուսումնարաններում ռուսաց լեզուի մէջ առաջադիմութիւն անելու նպատակով, լուսաւորութեան մինիստրութիւնը առանձին նոր կարգադրութիւններ է արել, որոնցով ռուսաց լեզուի աւանդելու պայմանները գերմանական ուսումնարաններում փոփոխութիւնների են ենթարկվում։

—

„Օլեվիկ“ լրագիրը հաղորդում է, որ մամուլին վերաբերեալ գլխաւոր կառավարութեան կարգադրութեամբ Ռէվելում գերմանական լեզուով հրատարակուող «Nordische Rundschau» ամսագիրը դադարեցրած է։

—

ՖԷՅԼԻԵՏՕՆ

ՆԻՒ-ՅՕՐԿԻ ՄԻ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՐՈՒԱԾԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԻՑ

(Wiener Fremdenblatt)

—

Ամերիկացի մի հոգևորական, որը հաստատ եկամուտ չունի, բայց պատկերի ժամանակ „իւր բանը“ տեսնում է, այսինքն չատ անգամ հրաւիրվում է պատկադրութեան, նորերումս ստիպուած էր պատասխանելու—նոյն իսկ սուրբ բաներից չ՚երկնչող մի բէսօբտեր (լրատու) հարցափորձին։

Երբ բէսօբտերը հոգևորականի տունը մտաւ սանդուղքների վերայ հանդիպեց նա մի երիտասարդ զոյգի, որը հենց նոր էր երեն յաւիտեան կապով կապել տուել։ Պատկի կարգը կատարող պաստորը սանդուղների վերևը կանգնած, վայր իջնող զոյգին եւսից ձեռքի շարժումով օրհնում էր և միևնոյն միջոցին դնում էր իւր պօրտմոնէյի մէջ 25 գօլլարի բանկային մի չէկ։

„Պատկերից դուք տարուայ բնթացքում բաւականին լաւ գումար ապ՚ըք է որ գանձում լինէք“ Թոյլ տուեց իրեն նկատելու բէսօբտերը։

«Ո՛չ, ոչինչ մի կերպ քաղց ենք տալիս էլի“ պատասխանեց պաստորը։ „Այստեղ և Բրօօքլինում պատկադրութեան վճարը տարրերվում է, նայելով վեհայի կարողութեանը, 5-ից մինչև 100 գօլլարի, բայց ցաւն այն է, որ շատ անգամ ոչինչ չենք ստանում“։

«Մեղք կարելի է այդ», վրա բերից անհաւատ բէսօբտերը, „ես այնպէս էի կարծում, որ ձեզ մօտ նազդ վճարելու սիստեմն է ընդունուած“։

„Աւելի սովորական լեզուով ասեմ ձեզ“, շարունակեց պաստորը, „շատ անգամ մենք զրկվում ենք մեզ հասանելի վճարից, խարխափութեան զոհ գնալով։ Ա՛հա պատմեմ ձեզ իմ դէպքս եկածներից մի քանի օրինակ։ Մի անգամ կէս գիշերին դրան զանգի խիստ ձայնից վեր թռայ անկողնիցս. վրաս հագնելով շտապեցի ես ներքև դուռը բանալու համար։

„Իմ առաջ կանգնած էր մի բաղդատուր և սիրահարուած զոյգ, որ անյապաղ պսակուելու ցանկութիւն յայտնեց։ Երբ պսակի կարգը կատարել վերջացրել էի, երիտասարդ ամուսինը սկսեց իւր հագուստի ու վարտիկի բոլոր զրպանները տակն և վերայ անել, և երբ մի վայրկեան երիտասարդ կինը աչքերը մէկ կողմն էր դարձրել, նա դրեց իմ ձեռքումս մի լիքը ծրար։ Ես գլուխս չնորհակալութեամբ խոնարհեցրի, մինչու որ ես իմ աշխատանաց համար լաւ վարձատրուած էի կարծում։ Խոյն պնացի ես իմ կնոջ սենեակը նրան հաղորդելու, որ նա առաջիկայ օրը կարող է առնել այն նոր զտակը, որի համար քանի շարաթ լինէ նեղացնում էր։ Յետոյ բաց արի ես ծրարը, և ինչ էք կարծում, ինչ գտայ ես նրա մէջ։

„Հարիւր գօլլար կամ աւելի շատ“,

„Ո՛չ. տասը Թերթ փափուկ Թղթից։ Բայց իմ պաշտօնս արգելում է ինձ այն մարդու վերայ վատ բան մտածելու, գուցէ նա ծրարի մէջ սխալուեցաւ և այն, որի մէջ փողն էր գրած գրպանումն մնաց։

„Այն էլ պէտք է ասեմ, որ այդ մարդը իւր սխալը ամենևին նկատած չէ, մինչու որ մինչև օրս ամենևին չերևեցաւ։ Այն ժամանակից սկսած ծրարների դէմ այն աստիճան նախապաշարուած եմ, որ չեմ կարող պսակադրութիւնից յետոյ անմիջապէս բաց չանել ծրարները։ Պաստորին իրեն հասանելի վճարից զրկելու համար շատ սիրով գործ գրած միջոցը պսակի վկայութեան Թղթով կատարած լաբէքթայութիւնն է։ Այսպէս քստ երեւոյթին ունևոր մի զոյգ խնդրեց որ պսակիմ իրեն։ Կարգը կատարելուց յետոյ վեհան ցանկութիւն յայտնեց ունենալու պսակի կատարման վկայութեան մի օրինակ ճաշակով չինած չրջանակի մէջ։ «Մի շատ գեղեցիկը լինէ համար չինել տուէք“, ասաց նա, „ես պատրաստ եմ դրա համար 25 գօլլար վճարելու։ Ե՞րբ կարող եմ ստանալ“։

«Ես նրան պատասխանեցի, որ ես մինչև շաբաթուայ վերջը պատրաստել կը տամ և կը հասցնեմ իրան։ Այդ Թուղթը և չրջանակը լինէ 17 գօլլար նստեց, բայց այն էլ պէտք է ասեմ, որ դա մի փառաւոր բան էր։ Ինքնիշխ կարող էք տեսնել, աւելացրեց պատասխանը Հառաչելով։ Այդ չրջանակը այժմ էլ զարդարում է մեր ննջասենեակի պատը, ուր ամեն առաւօտ ես նայում եմ նրան և միշտ ինձ ասում եմ, որ ես ինչ ուզում էի տալ, ես ամենևին չեմ ստացել։ Ես ինձ ասում եմ, որ ես ինչ ուզում էի տալ, ես ամենևին չեմ ստացել։

ԵՐԵՎԱՆԻ ԳՈՒՅՆԱՎՃԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Երեւան մեծագոյն ընտրողաց ժողովոյ նախագահ Ա. Մարմուրեան

Քարտուղար՝ Ե. Ալամդարեան

Ներկայ եղան ընտրողներ 1882-ին ձայնատուներ տրուած 2—3 տարի ի վեր Երեւան բնակող եւ 1848-ին Երեւան ծնած հայ տղայք, որոնք ունին 21 տարեկանէ վեր տարիք եւ որոնք ունին ընտրելու եւ ընտրուելու իրաւունք։

Ժողովոյ նպատակն էր ընտրել 1848-ին Երեւան ծնած հայ տղայ մը, որ ներկայացնէ Երեւանի գիւղական ընտրողները Ս. Ժողովին մէջ։

Ժողովը սկսաւ առաւօտեան ժամը 10-ին եւ տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 6-ը։ Ներկայ էին 1866-ին ծնած 27 տղայ։ Ընտրութեան ատեն ներկայ էին նաեւ ոստիկանապետ Ս. Ղազարեան եւ ոստիկանական պաշտօնեայ մը։

Ընտրութեան ատեն ներկայ եղողներէն ոչ մէկ ձայն տրուեցաւ Ս. Ղազարեանի, որ ներկայացուցած էր Ս. Ժողովին, որ ինք ընտրուելու իրաւունք չունի, քանի որ ինք Երեւանի քաղաքացի չէ։ Ս. Ղազարեան ներկայացուցած էր Ս. Ժողովին, որ ինք ունի անշարժ կալուածներ Երեւանի գաւառին մէջ, եւ ուրեմն ինք ունի ընտրելու եւ ընտրուելու իրաւունք։ Ս. Ժողովը ընդունեցաւ Ս. Ղազարեանի ներկայացուցած թուղթերը, բայց ինք չընտրուեցաւ։

Ընտրութեան արդիւնքը հետեւեալն է։

Ընտրողաց ընդհանուր թիւը 27 տղայ։ Ներկայ եղան 21 տղայ։ Ձայներ տուին 21 տղայ։ Ձայներ ստացան՝ Ա. Ալամդարեան 21 ձայն։ Ա. Ղազարեան 21 ձայն։ Ա. Ղազարեան 21 ձայն։ Ա. Ղազ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(Մեր թղթակցից)

Կ. Պոլիս, 23 օգոստոսի.—Երեկ, 22 հուլիսի, ՏՕՂՈՒՄԸ ՎԱՅԱՌՆԻ ՀԱՄԱՐ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅ ԵՒ ՏՈՒՐՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ

Ինչպես գրած էի ձեզ, Տօղումը Վայառնի համար վաճառքի մասին հայ և տուրք վաճառականների միջև ծագած վէճը, որ ներկայացուած էր Ներքին գործոց նախարարութեան, վերջապէս լուծուեցաւ երեկ, 22 հուլիսի, նախարարութեան մէջ կայացած ժողովի մէջ։ Ժողովին ներկայ էին Ներքին գործոց նախարարը, Ֆինանսների նախարարը, Արտաքին գործոց նախարարի տեղակալը, Ոստիկանապետը, Ազգային ժողովի նախագահ Ռուսթեմ փաշան, Ազգային ժողովի անդամներ Ալեքսան Պալեան և Գրիգոր Զոհրապ, Պատրիարքարանի ներկայացուցիչ Գարաբետ էֆենտին, Ազգային հիւանդանոցի տեսու

տի մէջ։ Ուսակի հատիկները, որոնցից բաղկացած է նա, միմեանց հետ չբախչելով խուզ ու ներդաշնակ ձայն են արձակում, որ նման է այն ձայնին, որ լսւում էր յայտնի եգիպտական սֆինկսից արևածագի միջոցին։ Շարժուն լեառն ոչ միայ կոնաձև ծայրով է վերջանում, այլ մի աշագին բացուածքով։ Այս սարի վերայ, ինչպէս, չի կարելի բարձրանալ, որովհետև ուսազը կարող է ոտների տակ փխրուել և իւր մէջը թաղել համարձակ բարձրացողին, որ կը կամենար նայել բացուածքին։ Բնիկ հնդիկները պատմում են, որ իրենց ցեղից շատերը փորձ են փորձել բարձրանալ այս սարը, բայց նրանք բոլորն էլ զոհ են գնացել, այնպէս որ նրանց մարմինները էլ չեն կարողացել գտնել։

***

«Figaro» մի հետաքրքրական անեկդոտ է պատմում երկաթէ կանցլեր, իշխան Բիսմարկի մասին։ Ինչպէս յայտնի է, Բիսմարկի բնտանեկան բժիշկը, Բերլինի համալսարանի բժշկական Հիւղի հետ ունեցած վիճաբանութիւններով յայտնի Շվէյնինգերն է։ Մի անգամ իշխան Բիսմարկը իրեն տկար զգալով ուղարկեց բժիշկ Շվէյնինգերի տեսնելու։ Նա վուլթաց իշխանի հիւանդին գնալու և սկսեց երկար ու բարակ հարցնել հիւանդի հիւանդութեան մասին։ Բիսմարկը կատաղեց բժիշկի երկարաբանութիւնից ու կտրեալ կերպով ասաց «Fragen Sie nicht so viel!» (Այդքան շատ մի՛ք հարցնիլ)։ Սակայն բժիշկը չը չխմբուեց։ „Լաւ եմ, իշխան,—ասաց նա,—բայց դարմանում եմ միայն, ինչո՞ւ ինձ կանչեցիք. գուք պէտք անհամեմատ կանչէիք, որովհետև այդ պարոնները սովորութիւն չունին իրենց հիւանդներին հարցնելու։“ Բիսմարկը այն աստիճան չչմեռաւ այս յանդուգն պատասխանից, որ քիչ էր մնում բժիշկ Շվէյնինգերին վերայ յարձակուէր, բայց յետոյ ուշքացաւ և աւելի հանգիստ կերպով ասաց. „Դէ լաւ, եթէ այդ այդպէս անհրաժեշտ է,—հարցրէք, ինչքան կամիք։ Ցաւսամ որ այնչափ հմուտ բժշկի գործս կը գտք, որքան կուզիս ուամիկ“։ Այն օրից նրանք թարեկամներ եղան և այլևս մխիթարութիւններ չանցին։

***

Անեկդոտ վաղնեցի և Դիմա յի մասին.—Փարիզի լրագիրը „Echo de Paris“ պատմում է, որ Ինչարդ Վագները սովորաբար ընդունում է իւր մօտ այցելուներին միջնադարեան զգեստով, որի մէջ նա գրում էր իւր երաժշտական արդիւնքները։ Մի անգամ Ալէքսանդր Դիւման այցելութեան գալով շատ ծնծաղեցաւ տեսնելով երաժշտին նոյն հագուստով. այս չը դուր եկաւ «Ցանկէդէլի» հեղինակին։ Սակայն գալով Փարիզ, նա այցելեց Դիւմային, որն որ հարկադրեց նրան երկար սպասելու և յետոյ դուրս եկաւ Հոխ Ճաղկէկար կապարով, վերարգարդ գլխարկով և մեծ կօշիկներով. „Ներեցէք, ասաց Ալէքսանդր Դիւման, որ ես նոյնպէս ընդունում եմ ձեզ աշխատասրի կապարով. իմ մտքերը կէսը Յագնւում են այս գլխարկում, իսկ միւս կէսը—այս կօշիկներում, որոնք անհրաժեշտ ենձ սերտելն արկածքների նկարագրութիւնների համար։

***

Ա և Պ ա տ մ ո ւ թ ի ւ ն.—Նիւ-Եօրկից գրում են, որ Հարաւային Նահանգներից մեզ մօտ եկաւ տիեզերական հրաշք, որը ինչպէս երևում է, կը զարթեցնէ անտարբեր դարմանքը։ Այդ մի սև, որպէս խէժ նեգրուհի է, որը իւր ձայնով կարող է մղել ևրոպայի աւաջնակարգ դերասանուհիները (պրիմադօններ) հետ։ Այս սև սոխակը Նեվլի Սեսիլիա Բրոկ, մի քանի տարի առաջ ծառայում էր իրրև ծծմայր մի հարուստ պլանտատորի տանը։

Երբը նա քնացնում էր մանուկներին երգով, նրա ձայնին հաւաքւում էին տան կեցողները։ Նրա տիկինը խնդրեց տեղական մի երաժիշտ վարպետի ուսուցանել իւր ծծմօրը երաժշտութեան սկզբունքը և շնորհիւ իւր անսովոր ընդունակութեան, նեգրուհին սկսեց այնպէս երգել, որ չուտով Թատրոնի կառավարիչը առաջարկեց նրան երգելու ամենաձեռնտու պայմանով։ Երգչուհին խնդրեց, որ կառավարիչը տար նրան բաւական ժամանակ ջրի մէջ բրինձ եփած և մէկ կամ երկու ձեռք ամենից պայծառ գունաւոր չորեր։ Կը պահպանվ արդեօք այդպիսի համեստութիւն ամագայ հրաշատրը—չատ երկբայելի է։

***

Ա գ ն ու ա կ ա ն ը ծ ո վ ի լ ո ղ ա բ ա ն ն ե ր ու մ. Սիլսում այս ամառը ծովային լողացողների առաջին ազնուական առիւծը երկար ժամանակ էր գրաւել Շելսպեներերգ Բերլինից։ Իւր սիրելութեամբ, սրամտութեամբ հրապուրում էր այնտեղ այց եկող հիւրերին և ստուեր էր ձգում այնտեղ գտնուած բոլոր ազնուական կալաչերներին իւր զարմանահրաշ չարժումներով։ Հրապարակական տեղանի չորքը նա ունէր առաջին տեղը և տիկինները, որոնք ունէին հասած աղջիկներ աշխատում էին նրա հետ ծանօթանալ Օգոստոսի 28-ին նրա անուանակոչութեան տօնն էր և մէկը պատրաստում էր նրան ձեռագործ ծխախոտի տուփ, միւսը մի ուրիշ բան, վերջապէս պատրաստեցին նուագածութիւն։ Ցանկարծ ջրերի կառավարութիւնից ստացուեցաւ տեղեկութիւն, որ Շելսպենբէրգ իրեն համարող գրաւիչ, Պոզնանցի, հրէայ է Աբրահամ Ֆէյգէլզոն անունով։ Կեղծ Շելսպեններերգը գրաւիչ յանկարծ հեռացաւ Սիլսից, յետոյ չտասցին հեռանալ ամբողջ մայրեր և դուստրները։

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴԱՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

10 սեպտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գրամարժէքը լսկսում է վայրկեանել. Լօնդոնի վերայ 23½ պենս, Բերլինի վերայ 200 գերմ. պֆենինգ, Փարիզի վերայ 247½ սանտ, ոսկին բարձրացաւ մինչև 8 ր. 45 կ. պօլուիմպերեալը։

ԲԵԼԳՐԱԴ. Թագաւորը վերադառնալով Վիէննայից «Յաւէտ Նախնի Սերբիայի և Մակեդոնիայի հետ միանալու։

Զօրքերի պատերազմական պատրաստութեան հրամանին համաձայն, ի զէն են կոչվում կամաւոր զինուորներ թիւով 60,000 մարդ։

ՓԱՐԻԶ. «Paris» լրագիրը հաստատում է, Բուլգարիայի պատերազմական մինիստրը, Կանտակուզէն հրաժարական տուեց։

ԿԱԼԿԱԹԱ. Երեք աւազանական զօրագունդ, նոր զրահաւորուած, կարգուելից գնաց Հերատ։

ԲԵԼԳՐԱԴ. Բօսնիայի և Հերցեգովինայի Աւստրիայի հետ միանալու լրի պատճառով, ուսանողները կամեցան Միլանին այս երկու նահանգների թագաւոր հրատարակել. բայց իշխանութիւնները դէմ կեցան այս ցոյցին։ Կաբինետը մտադիր է միջամուտ լինել այն վիճակի մէջ, որ ստեղծուած է Բալկանեան թերակղզու վերայ Բերլինի դաշնադրութեան համաձայն։

ԱԹԷՆՔ. Յունական կառավարութիւնը գումարում է բոլոր արձակուած ցամաքային և ծովային զինուորականներին։

Կ.-ՊՕԼԻՍ. Թրքական զօրքերը Մուխտար փաշայի զօրավարութեամբ մտան Ռումելիայի սահմանները։

ՓԱՐԻԶ. Ջինաստանին հաղորդում են, որ Տոնկինի սահմանագլխի մօտ քրիստոնեայների մեծ բազմութիւն և սրանց թուում բազմաթիւ ֆրանսիական կոյսեր կոտորուեցան։ Գեներալ կուրսին անկարող է օգնութեան ձեռք մեկնել պաշտօղներին։

12 սեպտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գերմանիայի Ռուսաց դեսպանը, գրաֆ Շուվալովին նուիրուեցաւ ակնակուռ Ալէքսանդր Նեւսկու նշանը։ Ներքին գործոց մինիստրին վերադարձին սպասում են սեպտեմբերի 20-ին, նոյնպէս և սպասվում է պատերազմական մինիստրի վերադարձին։

Մեր Դրան գերմանական դեսպանը որ արձակուրդ էր ստացել, կը մնայ Պետերբուրգում, մինչ Ֆիլեպոպոլի եղելութեանց պարզուիլը։

Գերմանական Դրան ռուսաց դեսպան Շուվալովը, այս շաբաթուայ վերջը կը գառնայ Բերլին։

Թուրքիայ դեսպանը, որ մօտերս արձակուրդով գնացած էր, այս շաբթիս վերջին կը գառնայ Պետերբուրգ։

Լրագիրները հաղորդում են, որ արքունական կալուածների մինիստրը կարելի է համարում տալ մասնաւոր ընկերութեան բաքուից Բաթում նաֆթային խողովակների շինելը։

Կ. ՊՕԼԻՍ. Արևելեան Ռումելիայի ապստամբութեան ճնշման մասին թրքական մինիստրների կարծիքները տարբերվում են. մինքանիսը առաջարկում են զինուորեալ միջամտութիւն, մեանները խորհուրդ են տալիս ամենից առաջ պետութիւններին դիմել, իսկ մինչև այն մի քանի վայրեր ուղարկել Ռումելիայի սահմանները։

ՌՈՒԽԱՐԵՍՏ. Ռումինական զօրքերի պատերազմական պատրաստութեան և Ռումինիայի, Սերբիայի և Յունաստանի մէջ կայացած դաշնագրութեան լուրը Բուլգարիայի հետ Մակեդոնիայի միացման արգելելու նպատակով զուրկ է ճշմարտութիւնից։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌՆՈՒՄ ԵՆ ՅՈՐԷՆ

ԳԱՐՏՎԵԼՈՎԻ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ,
Մէքայէլեան փողոց, տուն № 42
և շրջէ հայագործուէնան գործարանում,
Պէսկովեան փողոց, № 77.
10—6

CAPSULES DE MATICO
De GRIMAULT & C-e Pharmaciens A PARIS
Permis en Russie
ՄԱԹԻՓՕԻ ԳԱՊՍՕԼՆԵՐ
Փարիզու Գրիմօ և ընկ.
դեղավաճառաց
Ռուսաստանում ընդունուած.

Այս կապսօլները հոսման (gonorrhée) դէմ.
Վաճառւում է Փարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղատուններում. Т
(ամ. 3) 9—6

ՊԵՊՏՈՆԱՑԱՆ ՍՆՆԴԱՐԱՔ ՇՈԿՈԼԱԴ
Ֆարմացիայի մագիստրի
Ա. Լ Ե Ֆ Մ Ա Ն Ի
Բժշկական դեպարտամենտի Թոյլատրեալ
Ապրանքներ ու մ.
Արտաքին գործոց մինիստրութեան Դրքլսւոր պահեստը ՇՏՈՒՄԱՆ և ԼԵՄԱՆ դեղավաճառանոցում. Մոսկվայում Իլինկա։

Пріятнаго вкуса, полезенъ дѣтямъ и взрослымъ, ОСОБЕННО МАЛОКРОВНЫМЪ, какъ увеличивающій питаніе.
Продается во всѣхъ кондитерскихъ, гастрономическихъ, аптекарскихъ магаз. и аптекахъ.
Цѣна кор. въ 20 плит. 1 р. 20 к. ½ кор. 70 к.
Перес. кор. 40 к., 2 кор. 60 к. и т. д.

Աղորժելի է, օգտակար է ւլեխանց հասակաւորների համար, մանաւանդ ա րհնատակներին, երբև տնուղը ածելցնող նիւթ։
Վաճառւում է բոլոր քաղքավաճառանոցներում, դասարնոմքակա ն, դեղավաճառական խանութներում։
Արկղիկի գինն է (20 կտոր) 1 ր. 20 կ., ½ արկղիկը 70 կ։ Առաքման գինը մի արկղի 40 կոպ., երկու արկղի 60 կոպ. և այլն։
(Н.) 50—28

Մի ուսուցիչ հայ երիտասարդ քահանայ ընդունում է իւր ընտանիքում երեք պիշերօթիկ աշակերտներ։ Հասցէն հարցնել «Նոր-Դար»-ի խմբագրատնից։
6—1

Լայս տեսան Ֆ. Եմիգեանի
ԲԺՇՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՐԱՆԿԼԻՆ
Երկրորդ տիպ.։
(Գինն է 40 կոպ.)

ԳԻՐՔ ՎԱՃԱՌՆԳՈՅՆ
Երկրորդ տիպ.
(Գինն է 60 կոպ.)
Թարգ. վերմ. Փ. Վարդանեան.

Վաճառւում են կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

Ե. Վ. ԿՈՎԱԶԻ.
Գիշերօթիկ և կիսերկուայ ուսում
Նարանը այժմ գտնվում է ՇԱՀԱՏՈՎԻ ՄՄԻՐԱԳԵԱՆԻ ՏՈՒՆԸ. Զավճավճեան և Գրիգորեդեան փողոցների անկիւնում № 5։ Ընդունում են մանուկներ պատրաստելու համար կարգի ուսումնարանների համար։ Նոյնպէս և ընդունում են գիշերօթիկ գիմնազիստներ և կոլեգիստներ վերջերը դասարաններից, դասերը կրկնելու և գործնականապէս ֆրանսերէն լեզուն վարժուելու։ Ուսումը սկսուած է սեպտեմբերի 2-ից։
10—1

Վլադիկաւկասեան պօստալիոն
ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖ»
ԼԻՍ» ԿԱՑԱՐԱՆՈՒՄ.
Կառքեր, որոնք ձանապարհին վերցրել կարարներ ունին։
Թիֆլիսից գուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մ
Վլադիկաւկասից գուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան 4 ժամ 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րո
Անդրկովկասեան երկաթուղին
ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖ
ԼԻՍԻ“ ԿԱՑԱՐԱՆՈՒՄ։
Բաքուամ պատ. գնում է ժ. 8—35 րոպ. ա
Բաքուից „ գալիս է „ 10—25 „ գի
Բաքու . . . գնում է „ 10—55 „ գի
Բաքուից „ „ . . . գալիս է „ 8—„ „ երե
ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒԽՈՒՄԻ ՄԷՋ.
Թիֆլիսից ապր.—Նանապ. գնաց. գը
գում է . . . . . ժ. 3—15 „ ա
Սուբամից գալիս է . „ 8—24 „ ա

ԲՕՐՄԱՆԻ ԲԱԼԶԱՄ

Թոյլ է տրուած բժշկական խորհրդից, և գործ է գրվում գրըսից ոսկրային (րեվմատիզմի) յաւերի դէմ։ Գլխաւոր պահեստը Պետերբուրգում. Բայլշայա-Կանիւշէննայա № 14—22, Թիֆլիս և Բագու. պէշգործական առևտուրի Կովկասեան ընկերութեան մէջ։
32—3



ՊԱՀԵՍՏ
ԿՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆ
Նոր պատենտի տիպը
ՓՐԻՍՏԻՐ
կատարելագործուած
ԿԱՏԱՐԵԼ ՍՊԱՀՈՎԱՅՈՒՄՆ
Ծախվում է ԺԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՎ
Միակ գործակալ՝ Ն. Ֆ. Առաքելեան. Թիֆլիս, Երևանեան հրապարակ. տ. Տէր-Ասատուրեանի։
100—6

Дозволено цензурою. Тифлисъ, 12-го Сентября 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр. д. № 12.